# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԲԱԲԳԵՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԱԳՍՈՒՏՅԱՆԻՆ՝ ԾՆՆԴՅԱՆ 90 ԵՎ ՔԱՀԱՆԱՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

## ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒ ՏԷՐ ԲԱԲԳԷՆ Ա. ՔՀՆ. ՄԱԳՍՈՒՏԵԱՆԻՆ, ՈՐ Ի ԲՈՍԹՈՆ, ԱՄՆ

Սիրելի Տէր Հայր.

Ուրախութեամբ փոխեկացանք Ամերիկայի հայոց Արեւելեան թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանից, որ այս տարի հանդիսաւորապէս նշուելու է Ձեր ծննդեան 90-եւ քահանայական գործունէութեան 50-ամեակը:

Ծանօթ ենք հայրենի կեանքում եւ հոգեւոր ասպարէզում Ձեր մեծարժան վաստակին: Կէս դար Դուք քաջ և բարի հովուի անխոնջ նուիրումով անձնդիր ծառայում էք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն եւ բարեպաշտ ժողովրդին՝ հոգեւորականի Ձեր կեանքն իմաստաւորելով ազգաշահ ու եկեղեցաշէն գործերով:

Ազնիւ ծառայ բարի եւ հաւատարիմ:

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՅՍ ԳՐՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Մեր օրհնութիւնն ու խորին գնահատանքը: Յանուն Գերագոյն Հոգեւոր Խորհրդի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանութեան ընդունեցէք Մեր սրտաբուխ շնորհաւորանքներն ու լաւագոյն բարեմաղթանքները պատուաբեր զոյգ յոբելեանների բերկրալի առիթով: Թող Ամենակարող Տէրը պահի ու պահպանի Ձեզ առողջ եւ կենսուրախ, պարգեւի լիազգաց երջանկու-

թեան բազում առիթներ, հանապազ օրհնի Ձեր կեանքը գործոց յաջողութիւններով ու երկնատուր բիւր պարգևներով:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Օրհնութեան Գիրս
ի 11-ն Փետրուարի
ի թուին Տեառն 2000
և ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 4